ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 300	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 1997.08.22/19	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	24.07.1997
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	24.07.1997
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	24.07.1997
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.08.1997	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Լ. Տեր-Պետրոսյան
24 հուլիսի 1997 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 1997 թվականի N 300
քաղ. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանրապետությունում հանրային սննդի կազմակերպումը, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում առևտուրը կանոնակարգելու, գյուղատնտեսական արտադրանքի իրացումը բարելավելու, գյուղատնտեսական արտադրանք արտադրողների շահերը պաշտպանելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարությանը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, մինչև 1997 թվականի օգոստոսի 1-ը հաստատել հանրային սննդի կազմակերպման կանոնները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում առևտրի կանոնները և սպառողական ապրանքների շուկաներում առևտրի կանոնները:
2. Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից սահմանված ձևով եռամսյակը մեկ անգամ նախարարություն և Հայաստանի Հանրապետության հարկային տեսչություն ներկայացնել տեղեկատվություն մարզի (Երևան քաղաքի) տարածքում գործող հանրային սննդի ձեռնարկությունների, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաների մասին:
3. Թույլատրել գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում տեղակայված խանութների և կրպակների միջոցով իրականացնել նաև պարենային և ոչ պարենային ապրանքների վաճառք՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության հաստատած ցանկով:
4. Սահմանել, որ հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի նոր շուկաների ստեղծման թույլտվությունը սահմանված կարգով տալիս են քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարները, իսկ Երևան քաղաքում Երևանի քաղաքապետը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության հետ:
5. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված կանոնների հաստատումից հետո կազմակերպել դրանց լուսաբանումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1997 թվականի օգոստոսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ռ. Քոչարյան